ուելաւ վրէժխնդիր լինել թուքունիս, զի յորմէ հետէ եղեալ էր վէզիր՝ ոչ արար եասախ, այլ ի թագաւորէն եղև յառաջնումն և կրկին եղև այժմ ի թագաւորէն և ինքն վրէժխնդիր եղև և զայր մարդ եդ ի կերպ կանանց, զոր երթեալ ի տուն մտանէին, գուցէ գտանիցեն խմող մխին՝ կալցեն զնոսա, զոր ի նշանաւոր արանց ըստուգեալ իմացաք զառաջինն և զվերջինս, զոր այս առնեն այժմ ի կերպ կանանց շուրջ գալով։ Եւ զայր մարդ ի կերպ կանանց, զի մտցեն ի տունս՝ թէ զի՛նչ խօսին արք տանն և կանայք նոցա, զոր իմացեալ զայս բան ամենայն քաղաքիս՝ ի լուռ լեալ ահիւ ոչ խօսէին յամենայն բան և ոչ մի։

Կիրակի օր ամիս Մարտի։

Դ՚չի օրս (3 Մարտ) *առաւօտու ելին*[1]) *նաւքն պատերազմի Տաճկաց Լէ կտոր։ Եւ յերէկի օրս Բ՚չի ըզ-Խանճի Սէֆէրն ըմբռնեալ վէզիրին պատճառելով թէ ի խանն դուք բազում ոճիրս գործէք արծաթի եւ ղուռուշի. ղղուռուշն կտրելով պակասեցուցանէք. կալաւ զնա և եդ ի բանտի։ Եւ զորս գտանէին ի յայս գործ, որք ղուռուշ լման առնէին և պակաս տային, ըմբռնէին և տանէին առ վէզիրն։ Եւ քամին, որ էր բազում օր ի պորեազ, յայսմ աւուր եղև լօտոս, եւ նաւքն ի կղզիքն օթեցան*[2])։

Եւ առաւօտուս Դ՚չի (4 Մարտ) *գնացին և եղև սառն և ցուրտ՝ ձիւն գալով և երբեմն երբեմն արգիլէր և չոր ցուրտ լինէր։*

Եւ Ե՚չիս (5 Մարտ) *զԽանճին փրկեաց վէզիրն։*

Ուրբաթ օրս (6 Մարտ) *լուսինն նոր էր և էր ցուրտ աւուրքս։*

Եւ Շաբաթի օրս (7 Մարտ) *ոմանք ի մէնջ մտին*

1) ել. 2) օղեցան.